

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/3

18 մայիսի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 02.05.2012թ-ի նիստում քննության է առնվել <Արևակն> ՍՊԸ 19.04.2012թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 11.04.2012թ. թիվ 1205965 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 09.02.2012թ. թիվ 1205965 հանձնարարագրի, <Արևակն> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում 11.04.2012թ-ին կազմվել է թիվ 1205965 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

<Արևակն> ՍՊԸ-ի ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերող ձեռքբերումների գծով ընկերության կողմից 2011թ հունիս ամսվա ընթացքում իրականացված գործարքների մասով դիմումով հաշվանցման (վերադարձման) ներկայացված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 59.964 դրամ: Համաձայն Նաիրիի ՏՀՏ հետ կնքված փոխադարձ հաշվարկների տեղեկանքի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդն առ 27.01.2012թ-ի դրությամբ կազմում է 5.969.984 դրամ:

Ընկերության կողմից ուսումնասիրության ընթացքում <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքին կից հավելված 1-ի՝ ԱԱՀ-ի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների մեծության որոշման կարգի 16-րդ կետի ա) ենթակետով պահանջվող <Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշագրումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը չի ներկայացվել: Նույն կարգի 17-րդ կետի համաձայն, ուսումնասիրության ընթացքում վերը նշված տեղեկանքի չներկայացումը հիմք է ԱԱՀ-ի գումարների հաշվին այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) այդ գումարների հետ վերադարձը մերժելու համար:

Այսպիսով՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 59.964 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը ենթակա չէ սահմանված կարգով հաշվանցման և (կամ) վերադարձման:

<Արևակն> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Համաձայն ուսումնասիրության հիման վրա կազմված արձանագրության, մերժվել է 2011թ-ի հունիս ժամանակաշրջանի համար ընկերության ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերող ձեռքբերումների գծով հաշվանցման (վերադարձման) ներկայացրած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը՝ 59964 դրամ գումարի հաշվանցումը (վերադարձը), հիմնավորմամբ, որ ընկերության կողմից ուսումնասիրության ընթացքում <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքին կից հավելված 1-ի ԱԱՀ-ի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների մեծության որոշման կարգի 16-րդ կետի ա) ենթակետով պահանջվող <Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշագրումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը չի ներկայացվել:

Նույն ժամանակահատվածի համար ընկերության հաշվանցման դիմումը մերժվել էր 25.08.2011թ. 1201738 արձանագրությամբ և ընկերությունն այն գանգատարկել էր հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին, որի վերաբերյալ առկա է 16.12.2011թ-ի թիվ 67/8 որոշումը, որում մասնավորապես նշված է.

Ընկերությունը չի հանդիսացել ապրանքի փաստացի սեփականատերը և իրականացրել է միայն չմշակված ադամանդի մշակման աշխատանքներ և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափը կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում այն արտադրանքի մշակման կամ հավաքման, շարժական գույքի նորոգման, արդիականացման և համանման այլ ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնք արտահանվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքին կից հավելված 1-ի՝ ԱԱՀ-ի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և կամ վերադարձման ենթակա գումարների մեծության որոշման կարգի 16-րդ կետի «ա» ենթակետի պահանջվող «Բացթողումը թույլատրված է» և «Բեռը ստացված է» նշագրումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը վերաբերում է ապրանքների արտահանման գործարքներին, և քանի որ ընկերությունը «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի իմաստով չի իրականացնում ապրանքի մատակարարում, հտևաբար տեղեկանք չպետք է պահանջվեր և մերժվեր ԱԱՀ-ի հաշվանցումը՝ տեղեկանք չներկայացնելու հիմքով:

Խնդրում ենք վերանայել 11.04.2012թ-ն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի թիվ 1205965 արձանագրությունը հաշվի առնելով վերը նշված փաստարկները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով սահմանված «Ավելացված արժեքի հարկի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների մեծության որոշման կարգ»-ի (այսուհետ՝ կարգ) 16-րդ կետի համաձայն. «ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու համար հարկ վճարողը համապատասխան հարկային մարմին (ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնող անձանց) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման գործարքների մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից հարկ վճարողին տրված տեղեկանքը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված՝ «Բացթողումը թույլատրված է» և «Բեռը ստացված է» նշումներով մաքսային հայտարարագրի առկայության մասին»:

Կարգի 17-րդ կետի համաձայն. «Սույն կարգի 16-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմնի կողմից անցկացվող ուսումնասիրության կամ ստուգման ընթացքում, սակայն ոչ ուշ, քան հարկային մարմնի կողմից ուսումնասիրությունը կամ ստուգումը սկսելուն հաջորդող 5-րդ օրը, բացառությամբ այն դեպքի, երբ նշված կետով սահմանվել է փաստաթղթի ներկայացման այլ ժամկետ: Նշված ժամկետում փաստաթղթերի չներկայացումը հիմք է սույն կարգի 24-րդ կետի համաձայն ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման և ուսումնասիրության համար սույն կարգով սահմանված ժամկետների ընթացքը կասեցնելու կամ չներկայացված փաստաթղթերին վերաբերող՝ ԱԱՀ-ի գումարների հաշվին այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) այդ գումարների հետվերադարձը սույն կարգի 25-րդ կետի համաձայն մերժելու համար»:

Քննարկվող դեպքում ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հաշվին ընկերության այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու համար, ուսումնասիրությունն իրականացնող անձանց չի ներկայացվել

<Արտահանում՝ ազատ շրջանառության համար> մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման գործարքների մասով <Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշումներով մաքսային հայտարարագրի առկայության մասին տեղեկանքը: Արդյունքում ղեկավարվելով Կարգի 17-րդ կետի դրույթներով ընկերության դիմումով պահանջված 216.802 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի սահմանված կարգով հաշվանցման և (կամ) վերադարձման պահանջը մերժվել է:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:


Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումասիրելով սույն գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհուրդ եզրակացությունը, գտնում է, որ արձանագրությունը ենթակա է չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 11.04.2012թ. թիվ 1205965 արձանագրությանը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ